ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/3

«16» ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղուլունցը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Աստղիկ Ղարագյոզյանը
Նիստին մասնակցում էին Տեղ համայնքի ավագանու թվով 10 (տասը) անդամներ՝

1. Բաղդասարյան Նազիկ
2. Գալստյան Լարիսա
3. Դալլաքյան Արման
4. Դանիելյան Սևադա
5. Զեյնալյան Մասիս
6. Ղուլունց Դավիթ
7. Ղուկասյան Արագած
8. Միրզոյան Արամ
9. Շեգունց Ռոմիկ
10. Սիմոնյան Լորա

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ, 62-րդ և 64-րդ հոդվածներով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.
Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 13-ի ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը.
1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը հաստատելու մասին.
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.
3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 18-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող 0.8153 հա բնակավայրերի նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով «Տեղի թիվ 1 նախադպրոցական

հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին.
4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի համայնքապատկան հողատարածքներում անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներ իրականացնելուն համաձայնություն տրամադրելու մասին.
5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի օրը սահմանելու մասին.
6.«Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում ենթադրամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորում ապահովելու համաձայնության տրամադրման մասին.
7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագնու հերթական ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Քվեարկեցին
Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2025 թվականի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հատվածների:

Քվեարկեցին
Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1)Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 370673,258 հազ. դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 365430,258 հազ. դրամ» բառերով:

2)Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 420939,830 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 415696,830 հազ. դրամ» բառերով:

3)Որոշման Հավելված 1-ի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 130-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ, 14-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական տուրքերի գոտիավորումը համաձայն հավելված 1-ի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի և հավելված 3-ի:

3.Սամանել, որ տեղական տուրքի և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի N2/փ-112 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0057-0132) «Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» նշանակության 0,665 հա հողատեսքից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա «այլ հողեր» գործառնական նշանակությամբ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 27-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 140-Ա որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Քվեարկեցին
Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԵՂԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել «Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկեցին
Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով և հաշվի առնելով Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական ութերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի մայիսի 20-ին:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստը ավարտվեց ժամը 11:20-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ Բաղդասարյան Նազիկ

_____ Լարիսա Գալստյան

_____ Դալլաքյան Արման

_____ Դանիելյան Սևադա

_____ Զեյնալյան Մասիս

_____ Ղուլունց Դավիթ

_____ Ղուկասյան Արագած

_____ Միրզոյան Արամ

_____ Շեգունց Ռոմիկ

_____ Սիմոնյան Լորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ **ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**